ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 60-Լ

«18» 07 2023 թ. ք. Երևան

ՍԵՎԱՆԻ, ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ԵՎ ԳՈՐԻՍԻ ԿԱՅԱԶՈՐՆԵՐԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՆՇՎԱԾ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ ՀՐԱՄԱՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ զինված ուժերում տեղի ունեցած կառուցվածքային փոփոխություններով պայմանավորված՝ Սևանի, Եղեգնաձորի և Գորիսի կայազորների զինվորական դատախազությունների անվանումները փոփոխելու անհրաժեշտությունը, ինչպես նաև դրանից բխող՝ ՀՀ դատախազության համապատասխան աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների անվանումները փոփոխելու անհրաժեշտությունը, ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասով, «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ-իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Հրամայում եմ՝

1. Սևանի կայազորի զինվորական դատախազության, Եղեգնաձորի կայազորի զինվորական դատախազության և Գորիսի կայազորի զինվորական դատախազության անվանումները փոփոխել և անվանել, համապատասխանաբար, Գեղարքունիքի կայազորի

զինվորական դատախազություն, Արարատի կայազորի զինվորական դատախազություն և Սյունիքի կայազորի զինվորական դատախազություն:

2. Սևանի կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժնի, Եղեգնաձորի կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժնի և Գորիսի կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժնի անվանումները փոփոխել և անվանել, համապատասխանաբար, Գեղարքունիքի կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժին, Արարատի կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժին և Սյունիքի կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժին:

3. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի հրամաններում և հանձնարարականներում «Սևանի կայազորի զինվորական դատախազություն», «Եղեգնաձորի կայազորի զինվորական դատախազություն», «Գորիսի կայազորի զինվորական դատախազություն», «Սևանի կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժին», «Եղեգնաձորի կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժին» և «Գորիսի կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժին» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել, համապատասխանաբար, «Գեղարքունիքի կայազորի զինվորական դատախազություն», «Արարատի կայազորի զինվորական դատախազություն», «Սյունիքի կայազորի զինվորական դատախազություն», «Գեղարքունիքի կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժին», «Արարատի կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժին» և «Սյունիքի կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժին» բառերով և դրանց հոլովաձևերով:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

5. Սույն հրամանի կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

6. Սույն հրամանն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազներին և դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ